



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop: Yeghikem Manoogian, Primate

**Հրատարակութեան խնդրանքով**

**ՔԱՆՍԱՍ ՍԻՔԻԻ Մէջ ԿԸ ԿԱԶՄՈՒԻ ՆՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՄԸ**

Ամերիկայի Հայոց Արեւելեան Խմբի Առաջնորդ Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի թելադրութեամբ՝ Պէլվիլ Իլլինոյի Ս. Շողակաթ Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Տ. Ենորիք Ժ. Վրդ. Գասպարեան Ապրիլ 27ին այցելած է Միգուրի նահանգի Քանսաս Սիքի բնակութիւն հաստատած հայութեան:

Հովուական այս այցելութիւնը մեծապէս ուրախացուցած է քաղաքի Հայ հայրենակիցները՝ որոնք բնաւ մխիթարութիւնը չէին ունեցած Հայ հոգեւորականի մը այցելութիւնը վայելելու:

Հայր Ենորիք այցելած եւ ծանօթացած է բազմաթիւ հայերու եւ տեղւոյն վրայ նշանակուած է ծխական խորհուրդ մը հետեւեալ կազմով՝

- Հոգշ. Տ. Ենորիք Ժ. Վրդ. Գասպարեան՝ նախագահ
- Արա Զաքարեան՝ ատենապետ
- Ճէնիֆըր Հաթութեան՝ ատենադպրուհի
- Զաւէն Հաթութեան՝ գանձապահ
- Աստղիկ Սթէլլա Կիւլայեան՝ խորհրդական
- Ռօզ Օնպաշեան՝ խորհրդական
- Նաթալի Հաթութեան՝ խորհրդական
- Մայրըլ ֆրէնքեան՝ խորհրդական

Առաջնորդ Սրբազան Հայրը գրաւոր կերպով պաշտօնապէս հաստատած է այս ծխական խորհուրդը:

Այս տարի Ամերիկայի Ազգային Եկեղեցիներու խորհուրդի ժողովը գումարած է Միգուրի նահանգի Քանսաս Սիքի մէջ: Այս ժողովին մասնակցելու համար Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան, Տ. Ենորիք Ժ. Վրդ. Գասպարեան եւ Տ. Կարապետ Զինյ. Քոչաքեան Մայիս 13ին ժամանեցին Քանսաս Սիքի: Նոյն գիշերը՝ նորին Սրբազնութիւնը հանդիպում ունեցաւ նորակազմ ծխական խորհուրդի անդամներուն հետ:

Նախապէս եղած կարգադրութեան համաձայն՝ Մայիս 14ի երեկոյեան, տեղւոյն Յունաց Եկեղեցիին մէջ, Առաջնորդ Սրբազան Հայրը Ս. Պատարագ մատոյց, քարոզեց եւ Ս. Հաղորդութիւն մատակարարեց: Կրօնական այս պաշտամունքին ներկայ էին տեղացի 50 Հայ հաւատացեալներ, ինչպէս նաեւ Յոյն եւ Սերպ եկեղեցիներու ներկայացուցիչներ:

Յաւարտ Ս. Պատարագի, եկեղեցւոյ սրահին մէջ ծաշ սպասարկուեցաւ: Այս առթիւ խօսք առին հիւր եկեղեցականներ, ինչպէս նաեւ նորակազմ ծխական խորհուրդի անդամներ՝ որոնք ուրախութիւն եւ գոհունակութիւն յայտնեցին իրենց հանդէպ ցոյց տրուած այս հետաքրքրութեան համար, եւ խոստացան հետզհետէ աւելի կազմակերպուիլ եւ զանազան ձևոնարկներով համախումբ պահել տեղւոյն Հայերը:

Առաջնորդ Սրբազան Հայրը նախ շնորհակտեց նորակազմ ծխական խորհուրդի անդամները, եւ իր խրախուսական խօսքերով քաջալերեց ներկաները եւ յաջողութիւն մաղթեց բոլորին: